ԵՍ

ՄԻ ՁԱՐԿՆ ԵՄ ՔՈ ԿՈՎԻ

Կայծեր Շեկիկյանը մեկն էր այն նվիրյալներից, որոնք անանձնական սիրով գնացին պաշտպանելու Արցախ աշխարհը:

Նա ծնվել է 1971թ. ապրիլի 1-ին Թալինի շրջանի Կաքավաձոր գյուղում:

1993թ. հունիսի 12-ին, երբ նոր-նոր էր ընտանիք կազմել Նունե Մարտիրոսյանի հետ, կամավոր մեկնեց Լեռնային Ղարաբաղ՝ հայրենիքը պաշտպանելու:

1994թ. ապրիլի 8-ին Աղդամի շրջանի Մատաղիս գյուղում, երբ ահեղ մարտեր էին մղվում թշնամու դեմ, դավադիր գնդակը խլեց 23-ամյա Կայծերի կյանքը: Գյուղը սգաց իր հարազատ զավակի մահը:

Նա դեռ բազում անելիքներ ու սպասելիքներ ուներ: Չափազանց բարի էր, համեստ, համբերատար ու ընկերասեր, պատրաստ բոլորին օգնելու:

Հիանալի երգում էր: Մինչեւ օրս էլ ընտանիքը սրբությամբ է պահում նրա երգերի ձայնագրությունները, որոնց ոգին հայրենասի-

Հատերից մեկը

րությունն է, անսահման սերն ու նվիրումը հայրենիքի հանդեպ:

Մայրը՝ տիկին Հասմիկը, բոլոր մայրերի պես խնդրում էր ու պահանջում, որ որդին էլ կռիվ չգնա, բայց անկոտրում էր ազատամարտիկի ոգին. «Որ ամենքը փախչեն, ո՞վ պիտի պաշտպանի հայրենիքը»:

Եվ կրտսեր եղբորը՝ Հրայրին, հրաժեշտից առաջ խնդրել էր. «Իմ ախպեր, ես կերթամ, դու մայրիկին լավ կնայես, եթե կկարողանաս՝ կնոջս էլ նայիր»:

Մարտական ընկերոջ պատմելով, Կայծերը հերթապահում էր Մատաղիսի հենակետի առաջին գումարտակում: Լավագույն հրաձիգներից էր:

Ձինակիցները պատմում են, որ ազատագրվող ամեն բարձունք ու սար Կայծերի համար դառնում էր Անդոկ, Ծովասար ու Կեպին:

Նրա մահից երեք ամիս հետո ծնվեց դուստրը: Ծննդատան բակում հավաքվել էին մարտական ընկերները, որոնք աղջնակի ծննդյան լուրն առնելուն պես, ուրախացած գոչեցին. «Ծնվեց Կայծերուհին»:

«Ինձ հետ լինի թե առանց ինձ, բալիկս կմեծանա, իմ օգնությամբ թե առանց ինձ՝ դու երբեւէ կհասկանաս, թե ոնց պիտի ապրել կյանքում, թե ոնց պիտի նայել կյանքին: Թե աշխարհում ինչն է էժան, թե աշխարհում ինչն է անգին»: Իսկ կի՞նը...

Մինչեւ օրս էլ, երբ արդեն 6 երկար ու ձիգ տարիներ են անցել Կայծերի զոհվելուց, Նունեն չի ուզում հավատալ եւ չի հավատում, որ ամուսինը չկա:

«Երբ Ֆիդայու հագուստով մարդ եմ տեսնում, ինձ թվում է՝ ամուսինս է»:

Մայր եւ դուստր մտովի շարունակ քաջ զինվորի հետ են: Նունեն հաճախ է դստերը պատմում Կայծերի սխրագործությունների մասին. «Թող աղջիկս հպարտ ապրի»: Խոստացել էր՝ «Կվերադառնամ, անպայման կվերադառնամ»: Ախր ե՞րբ էր սուտ խոստում տվել...

Ի՞նչ երազանքներ ուներ: Նույնիսկ իր ապագա երեխայի համար մտովի անուն էր փնտրում: «Եթե տղա ունենամ, իմ Սերոբ պապի անունը պիտի դնեմ»: «Անունը մարդուն զարդարող առաջին հատկանիշն է». լավ գիտեր նա: Ի՞նչ իմանար, որ իր կյանքն այդքան վաղ Արցախ աշխարհում կայծի նման պիտի բոցկլտա ու...

Պետք է ասեմ դստերդ շուրթերով. «Քեզ կարոտում է քո Կայծերուհին, իմ հերոս հայրիկ»:

ՇՈՂԵՐ ՍԻՐՈՒՆՅԱՆ